600.0008.10.06.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 1999 թվականի №8
քաղ. Երևան

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «բ» ենթակետը և 42-րդ, 43-րդ, 44-րդ հոդվածները, ինչպես նաև ելնելով սպառողներին հուսալի և անվտանգ էներգիայի մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է՝**

1. Բավարարել «Հրազդանի ՋԷԿ» ՊՓԲԸ-ին գործունեության լիցենզիաներ ստանալու հայտերը և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. օգոստոսի 28-ի N39 որոշմամբ սահմանված կարգով տրամադրել դրանք՝ հետևյալ գործունեություններն իրականացնելու համար.
   - էլեկտրական էներգիայի արտադրություն (գործունեության լիցենզիայի գործողության ժամկետ - 5 տարի),
   - ջերմային էներգիայի արտադրություն (գործունեության լիցենզիայի գործողության ժամկետ - 5 տարի),
   - ջերմային էներգիայի փոխադրման և բաշխման լիցենզիաներ (գործունեության լիցենզիաների գործողության ժամկետ -անժամկետ):
2. Բավարարել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գործունեության լիցենզիա ստանալու հայտը և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. օգոստոսի 28-ի N39 որոշմամբ սահմանված կարգով տրամադրել այն՝ հետևյալ գործունեությունն իրականացնելու համար.

- էլեկտրական էներգիայի արտադրություն (գործունեության լիցենզիայի գործողության ժամկետ - 5 տարի):

3. Բավարարել «Երևանի ՋԷԿ» ՊՓԲԸ-ի գործունեության լիցենզիաներ ստանալու հայտերը և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. օգոստոսի 28-ի N39 որոշմամբ սահմանված կարգով տրամադրել դրանք՝ հետևյալ գործունեություններն իրականացնելու համար.
   - էլեկտրական էներգիայի արտադրություն (գործունեության լիցենզիայի գործողության ժամկետ - 5 տարի),
   - ջերմային էներգիայի արտադրություն (գործունեության լիցենզիայի գործողության ժամկետ - 5 տարի),
   - ջերմային էներգիայի փոխադրման և բաշխման լիցենզիաներ (գործունեության լիցենզիաների գործողության ժամկետ -անժամկետ):

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ. Մովսեսյան**